ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2266-Ա « 06 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի Հ.6075-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել լ/ա Հասմիկ Հովհաննիսյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի հ.6075-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը /ծածկագիր՝ 01-001-0535-0005/ գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում:

Քննարկվող հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով 11.08.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.6051 և հ.6052 վկայագրերը.

1. Երևանի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքի Սիլիկյան թաղամաս 9-րդ փողոցին հարող տարածքում գտնվող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հատակագիծ թողարկելու մասին» հ.6075-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.
   1) Որոշման 2-րդ կետում՝ «Մանիշակ Մկրտչյանին» բառերը փոխարինել «Արթուր Եղիազարյանին» բառերով.
   2) Որոշումը լրացնել նոր 3.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

« 3.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշման համաձայն՝ Սիլիկյան թաղամաս 9-րդ փողոցին հարող տարածքում գտնվող 509.65քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ բնակելի կառուցապատման:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ